

նոյնիսկ ձայնաւորով սկսող բային առջեւ, որպէսզի բային չեւոյն ալ տղեղ կերպով առաջին վանկին վրայ չիջնար, չ'իմանար, այլ ըլլար չի' իմանար, ինչպէս՝ չի' լսեր: Այս առաջարկը ժամանակին կատարած է Հ. Վարդան Հացունի, իր «Ուղղագրութիւն եւ առոգանութիւն Հայերէնի» հրատարակէր Երկասիրութեան մէջ (1933, էջ 340-341), եւ սրամտօրէն խորապահած է չ'ազատիր, չ'ընդունիր «հունդարակերպ նախաչեւերը»:

Ուղղագրական մեծ դիւրութիւն պիտի ընծայէր նաեւ անդրադարձելը՝ թէ չ' ձեւը կը գործածուի մի միայն ժխտական ձեւի Սիմ. Գեղեկայ եզ. գ. դէմքին մէջ:

Աւելին. քանի որ Պրն. Լ. Գ. կ'առաջարկէ զրել չիմանար - չգատաւար, ինչպէս պիտի գտնուէր Ա. Լծորդութեան մէջ ժխտական ձեւի սահմանական ներկայ եզ. գ. դէմքը՝ ստորագրական անկատարի գ. դէմքին:

Սահմ. Գեղեկ.

չեմ իմանար - չեմ իմանար - չ'իմանար

Ստորգ. անկ.

չիմանայի - չիմանայիր - չիմանար:

Ուրիշ խօսքով. ժխտական լծորդութեան մէջ՝ Սիմ. ներկան բաղադրեալ ձեւերով կը կազմուի, օժանդակ տանելով էական բայի ժխտական ձեւերը՝ չեմ - չես - չէ (որմէ չի). արդ բոլորովին քնքել չի-ին ապաթարցը՝ կը նշանակէ քնքել էական բային հետքը, եւ հետեւաբար չիթութիւն ստեղծել բաղադրեալ (չի իմանար) եւ պարզ (չիմանար) ձեւերուն մէջ:

Ե. — Պրն. Գարագաշեանի գրքոյկին մէջ կը գտնենք նաեւ մերթ կրկնութիւններ, որոնք թերեւս դիւրացուցիչ եւ ամբողջացուցիչ հանգամանք կու տան: Կան նաեւ ինչ ինչ գիրերու մասին տեղեկութիւններ եւ դիտողութիւններ, որոնք ուղղագրութեան հետ անմիջական ազդեցութիւն չունին, ինչպէս օր. թէ ի գիրը բայածական կը չինէ (բանալի), եւ թէ այս լի-ն չիթութիւն է չէ լի (= լեցուն) ամականին հետ. թէ ի գիրը կարգ մը անուններու առջեւ կը կորսուի (Բասակ - Սահակ) եւ թէ հին հայերէնի մէջ ի վերջացող կարգ մը բառեր նոր հայերէնի մէջ ի-ն կը կորսնցընեն (պատասխանի - պատասխան, պանդոկի - պանդոկ):

Օրինակներու կարգին, մանաւանդ

վարժութեան համար տրուած երկար շարքերուն մէջ (ո-օ, չ-ջ), յաճախ կը թուէ նաեւ բարդութիւնները, որոնք երկար ծաւալ կու տան եւ ծանծարցուցիչ կը դառնան: Օրինակի համար կը գրէ.

աղաչել - աղաչանք, աղաչանօք,
աչք - ծակաչք, սեւաչեայ, Հրաչեայ,
աչագեղ,
խաչ - խաչափայտ, խաչքար, խաչաղբիւր, խաչմտակ, խաչակնքել, խաչեղբայր...:

Երբեմն օրինակներու կարգին, երբ հարցը արմատական բառերու վրայ է, կը խառնուին նաեւ բարդ բառեր, որոնք լոկ պատահաբար օրէնքին տակ կ'իջնան: Օր. Ը հնչումի մասին խօսելով՝ կը գրէ. «Կարգ մը բառերու սկիզբը այդ Ը (ըզ, ըս) հնչումը չկայ. օրինակ, զլանալ, զրահ, զմրուխտ»: Եւ օրինակներու շարքին կը հաշուէ շքեղ, սգալ բառերն ալ, որոնք կը ծագին շուք եւ սուգ ձեւերէն:

Չնչին վրիպակներ են ասոնք, որոնք յաճախ նոյնիսկ քերականագէտներու ուղղութիւնէն կը սահին. ու մենք Պրն. Լ. Գարագաշեանի ձեռնարկին մէջ կ'ուզենք նշմարել ու գնահատել գլխաւորաբար այն անձնանուէր ճիշդը, զոր ի սպաս կը գնէ Հայ մանուկներուն հանդէպ, եւ բոլոր անոնց որ ուղղագրութեան սէր ունին:

Այս փոքրիկ գիրքը՝ մեր ուղղագրական դատին ի պաշտպանութիւն մեծ դեր մը ստանձնած է:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

~ ~ ~

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ - ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միութեան: Տպ. Աղեքսանդրիա, 1952, մեծագիր, էջ 160:

Շքեղատիպ հատորը 160 մեծկալ էջերով, զարդարուած շուրջ 140 պատկերներով, գրուած տաք սրտով ու սահուն գրութեամբ, կը կարգացուի մէկ շունչով, հմայուած գրքին անունէն ու պարունակութենէն որ կեանքն ու գործն է այդ ազգային ու ազգանուէր յոյժ գովելի եւ երախտաւոր Միութեան, որուն յիմնամեայ գոյութիւնը յարաճուն վերելքով, փայլուն յաջողութիւններով եւ սուրճ նախանձելի արդիւնքներով հրաշքի պէս բան մըն է մեր ազգին մէջ՝ որ այնքան կարօտ է

սիրոյ, միութեան եւ աննախանձ գործակցութեան: Հետեւաբար այս ոսկեղէն յորեկանի առթիւ անխառն է մեր հրճուանքը եւ անկեղծ մեր գովքը հանդէպ անոր Հիմնադիրներուն, անձնուէր գործիչներուն եւ բոլոր անդամներուն միշտ վերելքի եւ մեծագոյն յաջողութիւններու՝ յօգուտ Հայ ազգին:

* * *

Քայլ առ քայլ հետեւելով հատորին կը տեսնենք որ իրենց ազգին ու մշակոյթին սիրահար Հայ երիտասարդներ են որ կը միանան - Ծ. Հովիւեան, Է. Բարադեան, Օ. Թաշճեան, Ա. Ապահեան, Ա. պէյ ձէվահրճեան եւն. - եւ համեստ ծրագրով Հայկական քնքերցասրահի մը հիմը կը դնեն: Ծուռով անոնց կը միանան ոչ աննշան դէմքեր - Մ. Տամատեան, Յ. Փափեան, Լ. Ե. Կ. Մկրտիչեաններ, Մ. Թովաթիւս, ողբ. Գառնիկ Գլըճեան, Մ. Թաշճեան, Պ. Թաշճեան, Լ. Շիշմանեան եւ շուտով իրենց Միութիւնը կը կնքեն «Տիգրան Երկաթ»ի հմայքն անունով որ գեղատէր ու ազգասէր կը խորհրդանշէ: Համաշխարհային պատերազմէն վերջէ (1945) երբ հարկ կ'ըլլայ պետական որ, «Տիգրան Երկաթ»ը վաւերացում ստանալ, «Տիգրան Երկաթ»ը Հայ Մշակութային Միութիւն կը դառնայ հասարակաց հաւանութեամբ:

Միութեան Ծրագիր-կանոնագրի քանի մը հատուածներէն կարելի է գնահատել մը հաղթանակն ու զիտումները հիմնադիրներուն:

Ա. «Աղեքսանդրիահայ գաղութին միջեւ մտաւորական եւ բարոյական կապերը ամրապնդել եւ հայութիւնը միշտ մօտ պահել ՄԱՅՐ-ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»:

Բ. «Փրկել այլասերման վտանգէն նորահաս երկսեռ երիտասարդութիւնը, աւելցնել ընծայելով անոր օգտուելու շահեկան ու շինիչ դաստիարակական հաւաքոյթներու - գեղարուեստական ասուլիսներէն եւն. եւ ինչ, վիճաբանական ասուլիսներէն եւն. եւ անուանաբար՝ Հայ թէ օտար, հին ու նոր առաւելարար՝ Հայ թէ օտար հրատարակող միջոցներու կողմէ հրատարակուած հոյակապ ստեղծագործութիւններէն:

Գ. «Ստատարել Հայ կրթարաններէ ընթացաւարտ՝ կարիքաւոր երկսեռ պատանիներու ուսման եւ դաստիարակչական

գործին, մղելով դանոնք օտար երկրորդական բարձրագոյն վարժարաններու մէջ»:

Ազգային այս թանկագին Միութիւնը օրէ-օր աճելով իր անդամներով եւ գործունէութեամբ՝ պէտքն զգացուեցաւ անոր օժանդակ մարմին մը կազմելու: Այսպէս է որ ուրեմն 1915-ին հիմնուեցաւ իր անվան ժողովը «Տիգրան Երկաթ»ի կողքին «Գեղարուեստասէր Հայուհեաց Միութիւն»ը, որ լայնցուց գործունէութեան ասպարէզները՝ դրական - գեղարուեստական հանդէս - հաւաքոյթներով, թատերական ներկայացումներով, եւ գոյացած դոմարներով պահելով սան - սանահիններ գանազան վարժարաններու մէջ, ինչպէս նաեւ կատարելով հայերէնի, ֆրանսերէնի, անգլիերէնի, արաբերէնի, եւ յետոյ դաստիարակութիւններ ձեռագործի, դաշնակի եւն.:

Երիտասարդ տարրերու զանգուածօրէն խուժումը «Տիգրան Երկաթ»էն ներս հարկադրեց կազմել Կրտսերներու մարմինը ուրոյն վարչութեամբ, ինչպէս 1916ին նաեւ Հայ Ուսանողական Միութիւնը, նոյնպէս ուրոյն կանոնագրով ու վարչութեամբ, որ արդիւնաւոր կ'ըլլար համեմատ ընդհանուր ծրագրին եւ նպատակին՝ կազմակերպելով դրական - գեղարուեստական հանդէս - հաւաքոյթ - դաստիարակութիւն - բանախօսութիւն - զրօսապրտոյտ, որոնց հասոյթներով կը ճոխացնէին գրադարանը:

Հայ Ուսանողականը դրական հրապարակի վրայ եւս երեւցաւ 1924-ին՝ իր լոյս ընծայած «Մասիս»ով, որու ներշնչումով Գահրէի մէջ ալ կազմուեցաւ ժողով միութիւն մը որ դեռ կ'ապրի:

Տասնեակ տարիներ վերջ «Տիգրան Երկաթ»ի երկսեռ տաներն ալ որ Lycée français կը յաճախէին՝ հրատարակած են «Marius» հայկական յատուկ բաժինով, խմբագրութեամբ Պրն. Վաղինակ Արդարեանի՝ որ ներկայիս Ժրաշան քարտուղարն է Միութեան ու նաեւ արդիւնաւոր խմբագիրը յիմնամեակի ոսկեմատենին:

Կարելի է մի առ մի նշանակել Միութեան արդիւնաւորած գործերը հանդէպ Հայ ազգին զաւակներուն, Հայրենիքին եւ Երկրպագութեան: Բաւ է յիշել անոր հոգը 25-30 երկսեռ տաներու վրայ: Նախկին համեստ «Տիգրան Երկաթ» ընթացաւարտ քանի մը անգամ տեղափոխ-

ուած է ու զարգացած եւ ճոխացած շնորհիւ աղնիւ բարերարներու - որոնց մէջ յատկապէս յիշատակելի ողբ. Տիգրան Աւերբախեան՝ 2000 եղիպոտ. ոսկի նուէրով 1944-ին - 1950-էն սկսեալ ունի Հայ Մշակութիւն արժանաւայել ընդարձակ յարկաբաժին մը՝ ուր կայ հանդիսասրահ, լսարանական սրահ, ընթերցասրահ-մատենադարան, հանդերձարան - զգեստարան, հիւրասրահ, քարտուղարութիւն, խաղափայլ, բմպէլարան, պարտէզ:

Որքան որ Միութիւնը ունեցած է վարիչ բարձր մարմին մը, սակայն դանդաղ պէտքերու համար անոր գործակցած են օժանդակ մարմիններ եւ յանձնախումբեր եւ այսպէս կանոնաւորուած է անոր կեանքը եւ օրինակելի դարձած աշխոյժ եւ անթերի գործունէութիւնը:

Ոսկեմատենանը ընդարձակ ցանկերով կու տայ Միութեան գործունէութեան դանդաղ տեսակները որոնց արդէն ակնարկեցինք: Հետաքրքրական են թատերական ներկայացումները ուր բեմադրուած են գործեր Շիրվանդադէն (Արմենուհին, Կործանուածը, Պատուի համար, Չար Ուզին), Լ. Շանթէն (Հին աստուածներ), Արփիարեանէ (Կարմիր ժամուց), Մ. Կիւրճեանէ, Կ. Պարթեւեանէ, Պարոնեանէ, Ե. Օտեանէ, Սիպիլէ, Տիւմանեանէ, Մուրիսէ, Շէյքսպիրէ (Օթելլոյ), Թրիսթան Պեննարէ, Ֆ. Գոպէնէ եւ դեռ շատ շատերէ:

Հայ ժողովրդական երգախաղերէն՝ «Նա չլինի» սա լինի», «Աչուղ Դաւիթ», «Արշին Մալ Ալան», «Ուշ լինի» նուէ լինի» եւն.: Ասոնք բեմադրութեան մասնակցած են Աղեքսանդրիոյ եւ Գահրէի թատրոններուն վրայ՝ կարկառուն դերասաններ՝ Զարիֆեան, Սիրանոյշ, Արէրեան եւն.:

Բեմադրուած գործերու խնամոտ հասցումը կատարած են Մ. Տամատեան, Լ. Ե. Կ. Մկրտիչեաններ, Մ. Ս. Կիւրճեան, Ս. Շալճեան, Կ. Նաւասարդ, Ժ. Նիկողոսեան, Ռ. Գաղապեան, Վ. Հապէշեան, Լ. Փափաղեան, Վիթթորիա Արշարունի եւն.:

«Տիգրան Երկաթ»ի բեմէն խօսած են Հայ մտքի եւ գրչի տաղանդներ, որոնք չէ կարելի հոս յիշել մի առ մի, ինչպէս անկարելի է թուել Ոսկեմատենանը պնդող երեւելի այցելուները սկսեալ Շիրվանդա-

դէէն մինչեւ Անդրանիկ՝ Հայ քաղաքական եւ եկեղեցական դատակարգէն:

Հոն են շարքերը Պատուոյ անդամներու, Միութեան երկսեռ արդիւնաւոր արուեստասէրներուն:

Վերջին էջերն յատկացուած են Մատենադարանին ու անոր նուիրուող անդամներուն, Քարտուղարութեան, «Մատենադարաններուն» եւ ցանկ մը «Տիգրան Երկաթ»ը զնահատող թերթերուն:

Հուսկ ողբելով մը բոլոր անոնց որ հիմը դրին այդ Միութեան եւ յոյս ներշնչեցին եւ սատարեցին անոր զարգացման, որով ան եղաւ «Արուեստի, գեղապաշտութեան ու մշակոյթի նուիրուած փոքրիկ, այլ խնկաւէտ տաճար մը», որ ամէնուս սիրելի կը դառնայ եւ մանաւանդ օրինակ մեր սփիւռքի բոլոր դադուներուն:

~ ~ ~

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՏԱՐԵԳԻՐԻ: Տպ. Պէյրուս, էջ 308, գինը՝ 3,50 լիբ. ոսկի. - Արտասահման՝ 1,50 տոլար:

Հայկական ափիւնքի լաւագոյն պատրաստուած եւ իր բովանդակութեամբ ամէնէն ճոխ եւ ընտիր տարեգիրքն է որուն հանդիպեցանք այս տարի: Յարգելի խմբագիրը Պրն. Կարօ Գէորգեան կը յայտարարէ իսկոյն թէ «Կարեկիութեան սահմաններուն մէջ բոլոր ճաշակներն ու նախասիրութիւնները գոհացնելու սահմանուած նիւթերով» յօրինուած գործ մըն է:

Որքան որ ընդհանուր դիտութեան եւ զարգացումի վերաբերող օգտակար եւ կրթիչ շատ բան կայ հոն ցիր ու ցան, սակայն կրնանք ըսել թէ ան յատուկ ծրագրով եւ դիտումով առձեռն համայնագիտարանն է հայ կեանքի՝ տալով պատկերը մեր Սփիւռքին իր թիւերով, գործունէութեամբ, կրթական ու մշակութային բոլոր շարժումներով եւ երեւոյթներով:

Այս տեսակէտով մեծապէս զնահատելի կը դանենք գործը եւ ամէն հայու համար ոչ միայն օգտակար, այլ նաեւ անհրաժեշտ:

Ընդհանուր ակնարկը զոր պիտի տանք անոր բովանդակութեան գրեթէ էջ առ էջ, արդէն ցոյց պիտի տայ անոր իսկութիւնը եւ արժէքը, եւ կը համարինք որ այդ ձե-

ւով արդէն դայն ներկայացուցած կ'ըլլանք արժանապէս:

Տարեգիրքը, որ համեմուած է ոչ միայն դուարթ էջերով, այլ նաեւ պատկերներով, համեմատ նիւթերուն բաժնուած է դանդաղ գլուխներով:

Կը բացուի ԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ-ով (6-36), ուր իսկապէս սրտառու է Ստպայեան Կաթողիկոսի «Հովուական թուղթը» Դամասկոսէն ուղղուած՝ Կիլիկիայէն խլուած, ցրուած հայութեան (28 փետր. 1922), «Սահակ Բ. Կաթողիկոս Աւերակաց» արիւնոտ ստորագրութեամբ:

Յետոյ կը կարդանք ընտիր էջեր Ա. Յարութիւնեանէ, Օ. Կարոյէ, Ծ. Նարդուհիէ, Տ. Կամսարականէ՝ Կոմիտաս Վ. արուեստին եւ տաղանդին վերջիւումներով: Եւ դեռ թումանեանէն, Համաստեղէն, Ա. Արեղեանէն, Սրուանձաւանցէ, «Գ. Օտեանի մտածումներէն» եւ հուսկ Իսահակեանէն «Մօր սիրտը» քնքուշ աւանդակէպը:

Կը յաջորդեն «ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ» (37-46) այսինքն յուշագրութիւններ եւ ազգազրական էջեր՝ իրրեւ ամենաճոխ բաժինը ամէնէն հետաքրքրական էջերով, թէ «Խնչպէս ստեղծուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը» 1918ի Մայիսի 28ին, հայ արիւնով:

Նոյնքան կարեւոր դիտելիք «Ուիլսոնի իրաւարարական վճիռը Միացեալ Հայաստանի սահմաններու մասին» Սեբի դաշնագրէն, ինչ որ աւագ մնաց երազ եւ տենչանք, կարծես բաւական չըլլալով մէկ ու կէս միլիոն նահատակներու արիւնի՝ մեր հայրերու հողին տիրանալու:

Կը յաջորդեն «Հայաստանի Հանրապետութեան եօթը դահլիճներուն կազմերը» (1918-1920), Ահարոնեանի յուշատետրէն «Սեբի դաշնագրի ստորագրութիւնը» (10 Օգոստոս 1920):

Համով ու հոտով է իսկապէս «Փոնջ մը Յ. Թումանեանի մանրալիպերէն», լեւոյ ողբ. Հ. Վ. Հացունիի «Հայոց հին հարսանիքը», Խ. քհնյ. Աճեմեանի յուշերը «Հայկական Լէվէոնի» մասին, «Հայաստանի հողային իրաւունքները», Իսահակեանի «Սիրմեան Հայրիկի հետ» դեղեցիկ յուշերն եւ տալուորութիւնները, Հ. Պետեանի կեանքն ու գործը, «Հայոց Աճառեանի կեանքն ու գործը», «Հայոց դերը թրքական մշակոյթին մէջ» թատրոնի, դպրոցներու, երաժշտութեան՝ գեղե-

ցիկ համեմատութիւն մըն է: Բայց ի՞նչ տխուր է մտածել թէ մեր ցեղի այնքան մեծ երախտաւորութիւնը այնքան անողորմ կոտորածով փոխարինուեցաւ:

«Հայոց կաթողիկոսութեան աթոռը ի՞նչ տեղափոխութեանց ենթարկուեցաւ դարերու ընթացքին» պատմական թուականներով եւ «Ծագագրիկի» պատմութիւնը կը բոլորեն այդ բաժինը:

Երրորդ գլուխը նուիրուած է «ԳԵՂԱՐՈՒՆՍ»ի համադրական պատկերներով երաժշտութեան, նկարչութեան, ընդհանուր եւ հայ ճարտարապետութեան պատմութեամբ (Հ. Գաղանձեանի ուսումնասիրութեամբ):

Թատերականին մէջ Աւետեան - Վրոյր - Զարիֆեան - Սիրանոյշ կը յիշուին: Ու կ'արժարժուի անդամ մ'ալ «Աւաջին հայ թատերախաղ»ի հարցը. հուսկ յուշեր թիֆլիսի հայ թատրոնէն՝ Աղամեանի յաղթանակներով:

Դ. գլուխը «ՄԵՐԶԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԻՔ» ուր կը պատկերանայ Լիբանանի հայութիւնը (86,000 հոգի), մասնաւորապէս Պէյրութով, ուր հայը իր տարադրութեան մէջ դիւցազնական ճիւղեր կը թափէ իր զոյլութեան եւ մանաւանդ իր ցեղի կրթական ու մշակութային ձեռնարկներով: Աւելի քան 20 օրագիր-պարբերական մամուլը: Ծուրջ 50 դպրոց 11,000 աշակերտութեամբ:

Յատուկ բաժին մը ունի «Անթիլիասի կաթողիկոսարանը» որուն յարակից կ'ապրին ու կը գործեն դպրեվանքը եւ տղարանը: Մատենադարանը, ձեռագրատունը եւ տաճարն ալ իրենց արժանի յիշատակութիւն ունին:

Բայց ցաւալի է որ ոչ մէկ ակնարկ կայ Պէյրութի բաժնին մէջ՝ ո՛չ Հայ Կաթողիկէ պատրիարքարանին, ո՛չ ալ ձիւնիէի դպրեվանքին, ո՛չ Միթիթարեան ընծայարաններուն եւ ո՛չ իսկ Զմատու հինաւոր պանքի մասին՝ որ ունի բաւական ճոխ ազգային մատենադարան մը եւ թանկագին ձեռագրատուն մը:

Չէ մոռցուած Այնճաքը՝ նոր բոյնը Սուեի խաչէն տարադիր Մուսա լեռան հեռոսական սերունդին, որ կ'ապրի յոյսերով՝ իր մթնոլորտը հայ շունչով ջերմացած, իր վարժարանով, ընթերցարանով:

Սիւրիայ դադուքն ալ իր ոսկեղէն էջն

ունի կեանքի եւ դործունէութեան, Հալիպը հոծ կեդրոն ունենալով: Հայոց թիւը 85,000, չուրջ 60 դպրոցներով եւ 12,000 աշակերտութեամբ:

Որչափ որ տաք է գաղութին մէջ աղղա-
յին հոգին՝ ընկերական կազմակերպու-
թիւններով եւ երիտասարդական շարժում-
ներով, սակայն շատ աղքատ է գրական
շարժումը (3 թերթ միայն) համեմատու-
թեամբ Պէյրութի՝ որ հին օրերու հայկա-
կան Կ. Պոլիսը կը յիշեցնէ:

Եգիպտահայ գաղութի պատկերն ալ
կայ հոն: Շուրջ 30,000 հայ. Գահիրէի եւ
Ալեքսանդրիոյ մէջ իրենց հոծ կեդրոննե-
րը: Մամուլը ոտքի՝ կրկին մեծագոյն օ-
րաթերթերով. չուրջ 13 վարժարաններով
եւ 2500 աշակերտութեամբ:

Կիպրոսի գաղութը 4200 հոգի, Մելիտ-
նեան կրթ. հաստատութեամբ. Իրազը
15,000, զլիսաւորապէս Պաղատաի եւ Պաս-
րայի մէջ, 5 վարժարաններով եւ 2500
աշակերտութեամբ: Յորդանան եւ Իսրա-
յէլ 3500 հոգի, 4 վարժարաններով եւ
800ի չափ աշակերտներով՝ համառօտ ալ-
նարկով Երուսաղէմի Ս. Յակոբեանց:

«Համազգային»ի տարեցոյցը բնական
էր որ ունենար «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» Ընկե-
րութեան մասին ճորի բաժին մը: Ան հիմ-
նուած Գահիրէի մէջ 1928ին Օհանջանեանի
- Շանթի - Եսայեանի - Աղբալեանի -
Իփէկեանի ձեռքով կեդրոնացաւ Պէյրութ՝
հոծ հայութեան ծոցը զեղեցիկ ծրագրով

- Ա) Հայ լեզուի եւ մշակութիւն տարած-
ման.
Բ) Հոգալ հայեցի կրթութիւն մեր սե-
րունդին.
Գ) Հասցնել պատրաստուած կրթական ու
հանրային դործիչներ:

Առաջին կարկառուն դործը «Նշան Փա-
լանջեան ձեմարանը» (Պէյրութ), իբր եր-
կորդական վարժարան, մանկապարտէզի
եւ նախակրթարանի բաժիններով:

Փայլուն եղած է իր դործունէութիւնը
հրատարակութիւններով, թատերական
ընտիր նիւթերու բեմադրութեամբ, կրթ-
թական - գեղարուեստական շարժումնե-
րով: Մասնաճիւղերը նոյն ինքն Պէյրութի
մէջ եւ յետոյ Գահիրէ եւ Ալեքսանդրիա:

ԱՆ ՀԵՏԱՅԱՍԾ ԴԻՄՔԵՐ-ու մէջ կ'երե-

ւին Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէ-
փեանց, Լ. Շանթ եւ Գ. Իփէկեան:

Կայ հոն ԿԷՍ ԳԻՏԱԿԱՆ բաժին մը,
ընդհանուր հետաքրքրական նիւթերու մէջ
բժշկական-առողջաբանականը:

ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹԵՐ-ուն մէջ նախ կը
պատկերացուի Հայ մամուլը Մայր Հայ-
րենիքի եւ Սփիւռքի մէջ:

Հայաստանի պարբերականները՝ 40-ի
չափ. իսկ Արտասահմանի՝ 89:

Հայոց թիւը՝ Հայաստան եւ Խորհրդ-
դային երկիրներու մէջ՝ 2,700,000. Թուր-
քիա՝ 120,000, մնացածը 750,000 զանա-
կան երկիրներու մէջ:

Եւ դեռ կան «Հայերը Հարաւային Ամե-
րիկայի մէջ», Պատմական դէպքեր ու թը-
ւականներ: ԵՐԳԻԾԱԿԱՆ բաժին մը «Երե-
ւանի փուռեր»ով (Լեռ Կամսարէն), Պա-
րոնեանէն:

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ» զուարթ ու
կրթական բաժինով կ'աւարտի հատորը,
իբրեւ յաւելուած ունենալով Տօնացոյց
մը, պատմական դէպքերով, զուարթ եւ
իմաստուն խօսքերով: Եւ ամէնէն վերջ
ցանկը «Համազգային»ի հրատարակու-
թիւններուն:

Կարելի չէր անդրադառնալ հատորին
մէջ ցիրուցան այնքան օգտաւատ մանր -
մունր դոհարներու՝ որոնց կարգին աղղա-
յին աւանդալէպեր, յուշեր, սրամիտ խօս-
քեր, երգիծաբանութիւններ, հանելուկ-
ներ, խաչքառեր եւն. որոնք հատորը կը
սիրցնեն. կը փակենք դայն մեր հոգիներն
սփոփող զեղեցիկ տողերով (էջ 58), որ-
պէս օտար կարծիք Հայոց մասին:

«Հայերը մեծ եւ ազնիւ կարողութեանց
տէր ժողովուրդ մըն են. անոնք պահեցին
իրենց քաղաքակրթութիւնը դարերու ըն-
թացքին ֆնշման տակ, որ կրնար ճգնել
որ եւ է ուրիշ ժողովուրդ: Հայը երկրա-
գունդիս ազնուական ցեղերէն մէկն է:
Եթէ ինձի հարցութիւն անունները ամենա-
ցանկալի ցեղերուն, որոնք մերգաղթով
կրնային աւելցուիլ ամերիկացի ժողո-
վուրդին վրայ, ամէնէն առաջիններու
կարգին պիտի տայի Հայու անունը»:
(Խնորհու Հուսայթ, Գերմանիոյ ամերի-
կեան ղեկավար):

Հ. Ե. Փ.

Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆԻ

(ՓԱՐԷՂ. 1953, ՄԱՐՏ 22, ԱՊՐԷԼ 12)


Մեծարգոյ Հ. Սահակ Վրդ. Տէր Մով-
սէսեանի քահանայութեան ոսկեղէն յորե-
ւեանը մեծ ոգեւորութեամբ տօնուցաւ
անցեալ տարի Ս. Ղազարու մայրավանքին
մէջ (ՏԷՄ ԲԵՐԺ. 1952, Թ. 7-9, էջ 202-4):

Վենետիկէն վերջ, ահա՛ Փարիզահա-
յութիւնն է որ կու գայ իր յարգանքի,
համակրանքի եւ երախտագիտութեան
տրիտուրն ընծայելու վաստակաւոր Վար-
դապետին, պանծացնելով անոր մէջ մա-
տենադրի եւ դաստիարակի բարձր արժա-
նիքները: Մ. - Ռափ. վարժարաններու
Նախկին Սանուց Միութիւնն է որ կը կաղ-
մակերպէ գրական-գեղարուեստական շը-
քեղ հանդէս մը Մուրատեան վարժարանի
Պէշիկթաշլեան-Ալէմշահ թատերասրահին
մէջ, Մարտ 22-ին, ի պատիւ Յորեւոր
Հօր գրական եւ դաստիարակչական դոր-
ծունէութեան 50-ամեակին, ինչպէս նաեւ
Աւերի Մուրատեան վարժարանի մէջ պաշ-
տօնավարած տեսչութեան 25-ամեակին:

Պատկառելի բաղմութիւն մը, նախկին
սաներ, բարեկամներ, ծանօթներ, համա-
կիրներ, փութացած էին տօնելու իրենց
սիրելի Հ. Սահակին յորեւանը:

Բացման խօսքն արտասանեց վարժա-
րանի Տեսուչը՝ Հ. Մեսրոպ Վ. Ճանա-
րան. հակիրճ, կտրուկ եւ ընդհանուր դի-
տեսութեամբ մէջ քանդակեց Մեծարգոյ Յորե-
ւորին կեանքը իբր ուսուցիչ, դաստիա-
րակ, պատմագէտ, որու դործունէութեան
զինաւոր հանդուրժաններն են եղած Վենե-
տիկա, Պոլիս, Փարիզ: Յիշամեայ այդ
թեղուն կեանքին մէջ ան նկատեց անմահ
Սերաստացիին Գաղափարականին զեղեց-
կութիւնն ու մեծութիւնը:

«Ու հիմա, ըսաւ յարգելի բանախօսը,
յիսուն տարիներու երկար ընթացքին մէջ,
երբ Յորեւորը կը դարձնէ աչքերը նայե-
լու իր կտրած ուղին, ու դիտելու անոր
երկայնքին վրայ իր ցանած ու շտալօրէն
բաշխած բարիքները մատաղ եւ երիտա-



սարդ սրտերու մէջ, անշուշտ կը հրճուի
հօր մը պէս, կը հրճուի զիտակից դաս-
տիարակի մը պէս, եւ դո՛ւ է որ իր հոգւոյն
կայծերը կեանք տուած են նոր հոգիներու
եւ հրդեհած են սրտեր կրօնքի եւ հայրե-
նիքի սիրով, ու պատրաստած նոր ոյժեր
աղղապահայանման պայքարին համար»:
Ու վերջացուց իր խօսքերը մաղթելով որ
Հ. Սահակ Վ. ի երջանկութիւնը չունենայ
ըլլայ միշտ պայծառ ու շողջողուն:

Ապա բեմ բարձրացաւ Զօրավար Փրե-
ւոյ՝ վարժարանին քաղաքական տեսուչը,
որ յիշելով իր յարաբերութիւնները Յո-